# Արձանագրություն N 2

## ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/31 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան
Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1,
ՀՀ կառավարության աշխատակազմի
վարչական շենք, ս/հ 19տնտ.

08 դեկտեմբերի 2016թ.
ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի
նախագահ (ԳԱՊ)՝ Աշոտ Գրիգորյան
գնահատող անդամներ (ԳԱ)՝ Աշոտ Ավետիսյան
(ԳԱ)՝ Դավիթ Գրիգորյան
բացող անդամներ (ԲԱ)՝ Լիլիթ Մաղդեսյան
քարտուղար՝ (ՄՀՄ) Հայկ Խաչատրյան
բացակայում էր (ԲԱ)՝ Ջուլիետ Համբարձումյան

### Հայտերի բացման արդյունքների մասին

Գնահատող հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց յուրաքանչյուր չափաբաժնի գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գները՝

| Չափաբաժնի համարը | Անվանումը | Ընդհանուր (նախահաշվային) գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1 | Դյուրակիր համակարգիչներ | 480,000 |
| 2 | Ձայնագրիչ, ձայնագրելու և վերարտադրելու հնարավորությամբ | 70,000 |
| 3 | Տվյալների կրիչներ | 78,000 |

Հանձնաժողովի քարտուղարը հայտնեց, որ 08.12.2016թ.-ի ժ 10:00-ին գնահատող հանձնաժողովի առաջին բացող անդամը www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգում իր կատարած նշումներով երկրորդ բացող անդամի դիտարկմանն է ներկայացրել բացման ենթակա հայտերի ցուցակը, որից հետո երկրորդ բացող անդամը հաստատել է իրեն ներկայացված հայտերի ցուցակը: Հաստատումից հետո բեռնված հայտերի բացման մասին արձանագրությունը (Համակարգում՝ հաշվետվություն) կցվում է սույն արձանագրությանը:

Հայտ ներկայացրել են՝

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի հասցեն |
|---|---|---|
| 1 | «ՍԵԳ» ՍՊԸ | ք. Երևան, Սարկավագի փ. 72/2 |
| 2 | «Էդվարդ Քոմփյութերս» ՍՊԸ | ք. Երևան, Նաիրի Զարյան 22ա |
| 3 | «Վանդիստ» ՍՊԸ | ք. Երևան, Նալբանդյան 13-5 |

Մասնակիցների հայտերի գնահատման մասին.

Բոլոր մասնակիցների.

- Հայտերը կազմված և ներկայացված են հրավերի պահանջներին համապատասխան.
- Բացված հայտերում հրավերով պահանջվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը առկա են.
- Մասնակիցների ներկայացրած փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան՝ բացառությամբ «Կոմպյուտր Սերվիս» ՍՊԸ-ի 3-րդ չափաբաժնի մասով ներկայացված հավելված 4.1-ը.
- Գնահատող հանձնաժողովի գնահատող անդամների կողմից բոլոր մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար՝ բացառությամբ «ՍԵԳ» և «Վանդիստ» ՍՊԸ-ների (1-ին և 2-րդ չափաբաժինների մասով) գնային պայմանները, քանի որ դրանք գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Մասնակիցների կողմից ներկայացված գնի առաջարկները.

| Հ/հ | Անվանումը | Քանակը /հատ/ | Մասնակիցների անվանումները և գնի առաջարկները առանց ԱԱՀ /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|---|
| | | | ՍԵԳ ՍՊԸ | Էդվարդ Քոմփյութերս ՍՊԸ | Վանդիստ ՍՊԸ |
| 1 | Դյուրակիր համակարգիչ | 1 | 635,000 | ---- | 598,333 |
| 2 | Ձայնագրիչ, ձայնագրելու և վերարտադրելու հնարավորությամբ | 1 | 86,000 | ---- | 74,000 |
| 3 | Տվյալների կրիչ | 1 | 75,000 | 75,000 | 58,900 |

ԵՏՄ անդամ երկրի արտադրության ապրանք չի առաջարկվել:

<u>Գնահատող հանձնաժողովի որոշումների մասին</u>

**Գնահատող հանձնաժողովը որոշեց՝**

1. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/31 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղը զբաղեցրած մասնակից հայտարարել «Վանդիստ» ՍՊԸ-ին:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

2. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/31 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով երկրորդ տեղը զբաղեցրած մասնակիցներ հայտարարել «ՍԵԳ» ՍՊԸ-ին և «Էդվարդ Քոմփյութերս» ՓԲԸ-ին:

   *Կողմ՝ 3, դեմ՝ 0*

3. ՀՀԿԱ-ՇՀԱՊՁԲ-15/8-16/31 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգի հանձնաժողովի նիստը կասեցնել և մեկ աշխատանքային օրվա ընթացքում 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցել՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններ վարելու մասին՝ հայտնելով դրա վարման օրվա, ժամի և վայրի մասին:

*Կողմ՝ 3, դեմ՝ 0*

4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստն ու գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցություններն անցկացնել նույն վայրում՝ 13.12.2016թ. ժամը 10:00-ին, և բանակցությունների համար սահմանել ժամկետ՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար 10 րոպե:

*Կողմ՝ 3, դեմ՝ 0*

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)՝ | __________ | Աշոտ Գրիգորյան |
| գնահատող անդամ (ԳԱ)՝ | __________ | Աշոտ Ավետիսյան |
| (ԳԱ)՝ | __________ | Դավիթ Գրիգորյան |
| բացող անդամներ (ԲԱ)՝ | __________ | Լիլիթ Մաղդեսյան |
| քարտուղար՝ (ՄՀմ) | __________ | Հայկ Խաչատրյան |